



ԱԶԳԱՅԻՆ ՎԱՐԺԱՐԱՆ
 ARMENIAN PRIVATE SCHOOL - KUWAIT *Բուէյթ*



ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Քուէյթի Ազգային Վարժարանի Հիմնադրութեան յիսնամեակին նուիրուած Հանդիսութիւններու Գործադիր Մարմինը, արժանաւորապէս գնահատելու համար վարժարանիս անցնող ոսկեայ յիսուն տարիներու անշէղ եւ անխափան ընթացքը, 2010-2011 ուսումնական տարեըջանը կը յայտարարէ յիսնամեակի գնահատման եւ նուաճումներու արժեւորման տարի:

Այսօր ո՛չ ոք կրնայ ժխտել Քուէյթի Ազգային Վարժարանի դերը քուէյթահայութեան ազգային դիմագիծի պահպանման, երիտասարդութեան հայեցի դաստիարակութեան եւ հայ մշակոյթի ծաղկման ու ծանօթացման աշխատանքներուն մէջ:

Յիսնամեակի Հանդիսութիւններու Գործադիր Մարմինը, 2010-2011 տարեըջանին նախատեսած Է կազմակերպել կրթական-դաստիարակչական, գեղարուեստական, մշակութային եւ բազմաբնոյթ միջոցառումներ: Իսկ Վարժարանիս յիսնամեայ պատմութեանը պիտի անդրադառնայ յատուկ Յուշամատենի մը հրատարակումով:

Յրբելինական հանդիսութիւններու կարելորագոյն եւ եզրափակիչ փուլը պիտի հանդիսանայ 2011-ին, Մայիս ամսուան ընթացքին նախատեսուած գոյգ միջոցառումներով:-

Ա.- Պաշտօնական, երախտագիտութեան ու պարգեւատրման երեկոյ՝ բոլոր անոնց, որոնք իրենց օժանդակութեամբ ու ծառայութեամբ զգալի ներդրում ունեցած են Ազգային Վարժարանի հիմնադրման, վերելքին եւ բարելաւման աշխատանքներուն մէջ:

Բ.- Յիսնամեակի առիթով խրախճանքի երեկոյ՝ շքեղ պարահանդեսով, ուր կը նախատեսուի նաեւ անսպասելի եւ աներեւակայելի անակնկալներ:

Լիայոյս եւք, որ յիսնամեակի յոբելինական հանդիսութիւններու ծրագիրը լիովին յաջողութեամբ կը պսակուի, քուէյթահայութեան բարոյական եւ նիւթական օժանդակութեամբ ու արխիւային նիւթերու ապահովութեամբ:

Միասնաբար հպարտանալու ուրախ առիթը պիտի ունենանք: Կը հրաւիրենք քուէյթահայութիւնը, որ մեր ամենանուիրական հաստատութեան՝ Քուէյթի Ազգային Վարժարանի, Յրբելինականը նշելու եւ միաժամանակ, նոր հորիզոններ բանալու մեր նոր սերունդներուն:

**Եկէ՛ք միասին, մեր յուշերով,
 անմահացնենք Ազգային Վարժարանի փառապանծ պատմութիւնը:**

Քուէյթի Ազգային Վարժարանի Յիսնամեակի Հանդիսութիւններու Գործադիր Մարմին